ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար պրն Ս. Պապիկյանին
պատճեն՝ ՀՀ Բնապահպանության նախարար
պրն Է. Գրիգորյանին
Վանակվա Գրուպ ՍՊԸ տնօրեն Ս. Բալայանից

# Գրություն-պարզաբանում

Ի պատասխան Ձեր՝ 01ԳԲ/294ԱԱ/1495-19 առ 14.03.2019թ. խախտումները վերացնելու վերաբերյալ զգուշացման՝ հայտնում եմ հետևյալը.

Վանակվա Գրուպ ՍՊ ընկերությունը օգտակար հանածոների արդյունահանման և/կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹ-29/593 թույլտվությունը ստացել է 25.10.2018թ.-ին, բայց հանքային ջրի արդյունահանումը սկսել է 2018թ. դեկտեմբեր ամսից: Համաձայն «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության N 191-Ն որոշման ձև N 1աղյուսակի՝ ստորերկրյա ջրերի մշտադիտարկումները պետք է իրականացվեն ամենամսյա նվազագույն հաճախականությամբ: Փաստացի աշխատելով միայն մեկ ամիս՝ ընկերությունը չէր կարող իրականացնել պլանավորվող մշտադիտարկումները, ուստի 2018թ. համար ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին չի ներկայացրել ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

Ընկերությունը 2019թ. համար կկատարի իր պայմանագրային պարտավորություններից բխող մշտադիտարկումները, որոնց արդյունքները ամփոփելով օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կներկայացնի մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

Գրությանը կից ներկայացնում եմ վերոնշյալ զգուշացման պատճենը:

ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի փաստաթղթաշրջանառության ընդհանուր բաժին
Մուտք № 37917
«12» 06 2019թ.

Վանակվա Գրուպ ՍՊԸ տնօրեն Ս. Բալայան

«ՎԱՆԱԿՎԱ ԳՐՈՒՊ» «ВАНАКВА ГРУП» «VANAQVA GROUP» 08912234

10.06.2019թ.

+374-93-011-002

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 3.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

01գր/29.4 ՍԱ/1495-19
14.03.19թ.

Ձեր №

առ

«ՎԱՆԱԿՎԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ս. ԲԱԼԱՅԱՆԻՆ
հասցեն՝ ք. Երևան,
Կենտրոն, Բրյուսովի փ. 26
Հեռախոս՝ 077-41-91-18

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

(խախտումները վերացնելու վերաբերյալ)

ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 7/58 հորատանցքից արդյունաբերական (շշալցում) նպատակով 0,2 լ/վրկ ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ իրականացնելու նպատակով 25.10.2018թ-ին լիազոր մարմնի հետ կնքած օգտակար հանածոյի արդյունահանման և կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-593 պայմանագրի 3.4 կետի 3.4.27 ենթակետի համաձայն Ձեր ընկերությունը պարտավոր է ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացներ, կամ ընդերքօգտագործողի էլեկտրոնային կայքի առկայության դեպքում, կայքում տեղադրեր ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ եռամսյակային հաղորդումները՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը (մետաղական օգտակար հանածոների դեպքում) և (կամ) տարեկան հաշվետվությունը՝ մինչև յուրաքանչյուր տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին կարող է տալ գրավոր զգուշացում, եթե նա՝ չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ ընդերքօգտագործման պայմանագրով, ծրագրով կամ նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները:

Առաջարկում եմ 90-օրյա ժամկետում վերացնել պայմանգրով ստանձնած պարտավորությունների խախտումները և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն ներկայացնել վերոնշյալ պարտավորությունները կատարելու վերաբերյալ համապատասխան փաստերը վկայող փաստաթղթերը:

Զգուշացման մեջ նշված 90-օրյա ժամկետում վերը նշված թերությունները չվերացնելու դեպքում լիազոր մարմինն իրավունք ունի դադարեցնել Ձեր ընդերքօգտագործման իրավունքը:

Հարգանքով՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

3/13/2019

X

VERIFIED OCSP 13-Mar-19 13:02:42 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118

*Կատարող՝ Ընդերքի գործակալության ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի քննարկման և պայմանագրային բաժնի առաջատար մասնագետ՝ Հասմիկ Գասպարյան*
*հեռախոս՝ 011-32-12-46-2*